


ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ

ՆՅՈՒԹԵՐ ՀԱՅ ԳԻՏՆԱԿԱՆՆԵՐԻ ԿԵՆՍԱԳՐՈՒԹՅԱՆ
ԵՎ ԲԻԲԼԻՈԳՐԱՖԻԱՅԻ ՀԱՄԱՐ

ՍՏԵՓԱՆ ՍԱՐԳՍԻ
ՄԱԼԽԱՍՅԱՆՑ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԱ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 1962





АКАДЕМИЯ НАУК АРМЯНСКОЙ ССР

МАТЕРИАЛЫ К БИОБИБЛИОГРАФИИ УЧЕНЫХ АРМЕНИИ

СТЕПАН САРКИСОВИЧ
МАЛХАСЯНЦ

ИЗДАТЕЛЬСТВО АН АРМЯНСКОЙ ССР
ЕРЕВАН

1962

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ

ՆՅՈՒԹԵՐ ՀԱՅ ԳԻՏՆԱԿԱՆՆԵՐԻ ԿԵՆՍԱԳՐՈՒԹՅԱՆ ԵՎ
ԲԻԲԼԻՈԳՐԱՖԻԱՅԻ ՀԱՄԱՐ

012 [Մաթեմատիկա]

Մ-16

ՍՏԵՓԱՆ ՍԱՐԳՍԻ
ՄԱԼԽԱՍՅԱՆՅ

A 2847
I



ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԱ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ


ԵՐԵՎԱՆ

1962

Տպագրվում է
Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի
Խմբագրական-նրատարակչական խորհրդի
որոշմամբ

Ներածականը պրոֆ. դոկտ. Է.Գ. ԱՂԱՅԱՆԻ
Բիրլինգրաֆիան կազմել է Ռ. ԲԱԲԱԶՅԱՆՈՒՆԸ

Введение проф. докт. ЭД. АГАЯНА
Библиографию составила Р. БАБАДЖАНИЯН





ՀԱՅ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ
ԳՐԱԴԱՐԱՆ № 2
ԱԿԱԴԵՄԻԱ

ԱԿԱԳԵՄԻՈՍ Ա. Ս. ՄԱԼԽԱՅԱՆՅԻ ԿՅԱՆՔԻ
ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՏԱՐՆԹՎԵՐԸ

- 1857 թ. Ախալցիխի քաղաքում ծնվել է Ստեփան Սարգսի
Մալխասյանցը։
- 1871 թ. Ավարտել է Ախալցիխի Կարապետյան ծխական
դպրոցը։
- 1874 թ. Ավարտել է Ախալցիխի Ռուսական դավառական
դպրոցը։
- 1874—1878 թթ. Ընդունվել է Էջմիածնի Գեորգյան համարանը
և զուրս է եկել վերջին՝ հինգերորդ դասարանից։
- 1879 թ. Սկսել է աշխատակցել «Մշակ» լրագրին։
- 1881 թ. Ընդունվել է Պետերբուրգի համալսարանի արևելյան
լեզուների ֆակուլտետը որպես ազատ ունկնդիր։
- 1885 թ. Լույս է տեսել «Ստեփանոս Տարոնեցիու Ասողկան
Պատմություն տիեզերական» ուսումնասիրությունը։
- 1887 թ. Ստացիոնար ուղանող Պետերբուրգի համալսարանում։
- 1887 թ. Գերմաներենից թարգմանել է Շեքսպիրի «Լիր թագա-
վորը»։
- 1889 թ. Ավարտել է Պետերբուրգի համալսարանի արևելյան
լեզուների ֆակուլտետի «Հայ-սանսկրիտ և հայ-վրացա-
կան» բաժինը՝ թեկնածուի աստիճանով։
- 1889—1890 թթ. Ախալցիխի Կարապետյան և Եղիազարյան
դպրոցների ավագ ուսուցիչ։
- 1890—1910 թթ. Ներսիսյան դպրոցի հայոց լեզվի և մատե-
նագրության դասատու (1903—1906 թթ.՝ նաև տեսուչ)։

- 1891 թ. իւլյս է տեսել «Դրաբարի հովովումը, խոնարհումը և նախդիրները» աշխատութիւնը:
- 1892 թ. իւլյս է տեսել «Դրաբարի համաձայնութիւնը» աշխատութիւնը:
- 1903 թ. Ձեռնարկել է «Պատմագիրք հայոց» մատենաշարի հրատարակութիւնը:
- 1910 թ. Թիֆլիսի Հովնանյան օրիորդաց դպրոցի տեսուչ և դասատու:
- 1914—1915 թթ. Էջմիածնի Գևորգյան ճեմարանի տեսուչ:
- 1917—1919 թթ. Թիֆլիսի Գայանյան օրիորդաց դպրոցի տեսուչ և դասատու:
- 1920—1921 թթ. Ախալցիխէի դիմնադիրայի տեսուչ:
- 1922—1935 թթ. Աշխատել է «Հայերեն բացատրական բառարանի» վրա:
- 1940 թ. իւլյս է տեսել «Մովսէս Խորենացու առեղծվածի շուրջը» աշխատութիւնը:
- 1940 թ. Ստացել է բանասիրական գիտութիւնների դոկտորի աստիճան՝ honoris causa.
- 1942 թ. Ընտանիքով փոխադրվել է Երևան:
- 1943 թ. Ընտրվել է ՀՍՍՌ Գիտութիւնների ակադեմիայի հիմնադիր կազմի անդամ:
- 1944—1945 թթ. իւլյս է տեսել «Հայերեն բացատրական բառարանը»:
- 1946 թ. Արժանացել է Պետական մրցանակի լատերատի կոչման «Հայերեն բացատրական բառարանի» համար:
- 1947 թ. 21/VII վախճանվել է Երևանում:

ԿՅԱՆՔԻ ԵՎ ԳԻՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՌՈՏ ԱԿՆԱՐԿ

Անցյալ դարի 30-ական թվականների վերջերից իր գրական ու գիտական բեղմնավոր գործունեությունն սկսեց մեր ժամանակի ականավոր հայագետներից մեկը՝ Ստեփան Մալխասյանցը: Յուր բազմաթիվ թարգմանություններով, գրախոսականներով, սլատմա-բանասիրական ու լեզվաբանական հետազոտություններով և բառարանագրական աշխատանքով Ստ. Մալխասյանցն իր հրկարամյակյանքի ընթացքում գիտնականի անխոնջ գործունեությամբ մեծ ծառայություն է մատուցել հայկուլտուրային ու գիտությանը և մեծարժեք ժառանգություն թողել սերունդներին:

Մալխասյանցը ծնվել է 1857 թվականին, Ախալցխիսիում: Նախնական կրթությունն ստանալով ծննդավայրում, մեկնել է Պետերբուրգ՝ բարձրագույն կրթություն ստանալու: Այստեղ նա սովորել է Պետերբուրգի համալսարանի արևելյան լեզուների ֆակուլտետում, աշակերտելով իր ժամանակի նշանավոր հայագետ Քերովբե Պատկանյա-

նին: 1889 թվականին ավարտելով համալսարանը, Ստ. Մալխասյանցն ամբողջապես նվիրվել է մանկավարժական ու գիտական գործունեության: Դեռևս ուսանողական տարիներից թղթակցելով հայկական զանազան թերթերի ու ամսագրերի, Մալխասյանցն արդեն ճանաչվել էր որպես շնորհալի երիտասարդ, որ գիտնականի լուրջ հույսեր էր ներշնչում: Վերադառնալով Անդրկովկաս, նա է՛լ ավելի մեծ եռանդով ծավալեց իր գիտական գործունեությունը՝ իր ուսումնասիրություններով, գրախոսականներով ու զանազան առիթներով: գրած հոդվածներով արձագանքելով իր ժամանակի հայագիտությանը հուզող հարցերին: 1921 թվականին, 64 տարեկան հասակում, Մալխասյանցը հրաժարվեց մանկավարժական գործունեությունից և ամբողջապես նվիրվեց գիտական աշխատանքներին, հատկապես «Հայերեն բացատրական բառարանի» կազմելուն: 1940 թվականին Մալխասյանցին շնորհվեց ֆիլոլոգիական գիտությունների դոկտորի աստիճան՝ *honoris causa*: Խորին ծերության մեջ էլ, հաստատվելով Սովետական Հայաստանում, նա իր հետազոտություններով ակտիվ մասնակցություն էր ցուցաբերում Հայաստանի գիտական կյանքին ու իր ծանրակշիռ խոսքն տալով հայագիտության կարևոր հարցերի մասին: Բարձր գնահատելով Ստ. Մալխասյանցի գիտական վաստակը, Հայաստանի կառավարությունը 1943 թը-

վականին նրան ՀՍՍՌ Գիտությունների ակադեմիայի Հիմնադիր կազմի անդամ ընտրեց:

Մալխասյանցը վախճանվել է 1947 թվականին:

Իր գրական-գիտական գործունեությունը Մալխասյանցն սկսել է թարգմանություններով ու պատմա-բանասիրական հետազոտություններով: Ռուսերենից, օտար լեզուներից, ինչպես և գրաբարից նա թարգմանել է ռուս և եվրոպական դասական գրականության ու հայ հին մատենագրության բազմաթիվ ընտիր նմուշներ, որոնք սիրով ու երախտագիտությամբ են ընդունվել հայ ընթերցողի կողմից: Առանձնապես մեծ արժեք է ներկայացնում Շեքսպիրի «Մակբեթի» և էբերսի «Մարդեմ» ստեղծագործությունների գեղարվեստական թարգմանությունը, որոնք մեր թարգմանական գրականության լավագույն նմուշներից են: Հայ հին մատենագրությունը ժամանակակից ընթերցողին մատչելի դարձնելու գործում անդնահատելի է Ստ. Մալխասյանցի դերը հատկապես Մովսես Խորենացու և Փավստոս Բուզանդի գրքերի թարգմանությամբ, որ կատարված է գիտական բարձր մակարդակով: Իր երկարամյա գիտական գործունեության ընթացքում Մալխասյանցն անդրադարձել է հայագիտության բազմաթիվ կնճռոտ հարցերին և իր հետազոտություններով մեծապես նպաստել դրանց լուծմանը: Նրա պատմա-բանասիրական բազմաթիվ ուսումնասիրություններից առանձնա-

պէս կարեոր են «Ուսումնասիրություն Փալատոս
 Բուզանդի պատմության» (Վիեննա, 1896) և «Աե-
 բեոսի պատմությունը և Մ. Խորենացին» (Թիֆլիս,
 1899), որոնց մեջ քննության են առնվում Փալատո-
 սի «Պատմության», Մովսէս Խորենացու ու Սեբեո-
 սի գրքերի ուսումնասիրության հետ կապված
 բազմաթիվ վիճելի հարցեր և, մեծ մասամբ, դրա-
 կան լուծում ստանում։ Իր բազմաթիվ բանասի-
 րական հետազոտությունների մեջ Մալխասյանցը
 շատ ու շատ ճշտումներ է մտցնում հայ հին մա-
 տենագրության հուշարձանների հրատարակու-
 թյունների մեջ և գիտական ճիշտ լուսաբանությու-
 րով տալիս զանազան խնդիրների։ Սակայն, չնայած
 հայ հին մատենագրության ուսումնասիրության
 բնագավառում ունեցած մեծ վաստակներին, Մալ-
 խասյանցն իրավամբ ավելի շատ ճանաչվել է որ-
 պէս լեզվաբան, որպէս հայ լեզվի խորահմուտ
 ուսումնասիրողներից մեկը։ Իր բազմաթիվ հետա-
 զոտությունների մեջ Մալխասյանցն անդրադարձել
 է հին հայերենի, հայոց լեզվի պատմության, հա-
 մեմատական քերականության ու ժամանակակից
 հայերենի զանազան հարցերին, ինչպէս, օրինակ,
 հայոց լեզվի ցեղակցության, հայերենի ստուգա-
 բանությունների, աշխարհաբարի ուղղագրության,
 հոլովների և այլ բազմաթիվ խնդիրների և, կանգ-
 նած լինելով գիտական հաստատուն հիմքերի վրա,
 իր վճռական ու ծանրակշիռ խոսքն է ասել։ Առան-

ձին զրքերով լույս տեսած, հայերենին վերաբերող նրա աշխատություններն են.

1. «Գրաբարի հոլովումը, խոնարհումը և նախդիրները», որ ունեցել է երկու հրատարակություն (Թիֆլիս, 1891 և 1910) և արևելահայ աշխարհաբարով հրատարակված՝ գրաբարի ձևաբանության լավագույն դասագրքերից մեկն է:

2. «Գրաբարի համաձայնությունը» (Թիֆլիս, 1892), ինչպես հեղինակն էլ ասում է, նախորդի երկրորդ մասն է: Այս գիրքը, որ լիովին պարունակում է գրաբարի շարահյուսությունը, քերականագիտական-լեզվաբանական տեսակետից մեծ արժեք է ներկայացնում: Առանց տատանվելու կարելի է ասել, որ նա գրաբարի շարահյուսության միակ ամբողջական ու սխտեմատիկ ուսումնասիրությունն է, որ աչքի է ընկնում թե գրաբար լեզվի հմուտ գիտությամբ, և թե նյութի գիտական մշակումով: Այս աշխատության բարձր արժեքը ճիշտ է գնահատել մեծահմուտ հայագետ Անտուան Մեյեն, համարելով այն «մի դասական քերականություն»¹:

Մալխասյանցի գլուխ գործոցն է, սակայն, «Հայերեն բացատրական բառարանը», չորս մեծածախալ հատորներից բաղկացած մի աշխատություն, որ ոչ միայն հեղինակի բոլոր աշխատու-

¹ Memoires de la Societée linguistique de Paris, X, էջ 241, ծանոթություն:

թյունների պսակն է, այլև մի նշանավոր երևույթ
 սովետական հայագիտության պատմության մեջ¹,
 իր տեսակի մեջ առաջինը լինելով, այդ բառա-
 րանը ներկայացնում է հայոց լեզվի բառապաշարը
 հինգերորդ դարի մատենագրությունից սկսած
 մինչև մեր օրերի գրական լեզուն և բարբառները:
 Նրա ընդգրկած նյութի մասին լրիվ պատկերացում
 կազմելու համար ավելորդ չենք համարում մեջ
 բերել հեղինակի խոսքերը՝ յուր բառարանի ծրագրի
 մասին. ըստ այդ ծրագրի, շորս հատորի մեջ «այս
 բառարանը պարունակելու է հայերեն լեզվով գրը-
 ված ու խոսված բոլոր բառերը մեր մատենագրու-
 թյան սկզբից մինչև մեր ժամանակները, այսինքն՝
 բառամթերքները գրաբարի, ստորին գրաբարի,
 ռամկորենի, արդի գրական լեզվի և գավառական
 բարբառների՝ իրենց ոճաբանություններով, հին և
 նոր ժամանակի փոխառյալ բառերը հմրոպական
 կամ արևելյան լեզուներից, ցույց տալով նրանց
 ծագումը, գրական լեզվի ու բարբառների բառերի
 ամեն մի նշանակության համար համապատաս-
 խան օրինակներ, քերականական ցուցումներ և
 այլն» (հատ. Ա, Առաջաբան, էջ է): Այս ընդարձակ
 ծրագիրն արդեն բավական է, որպեսզի բառարա-
 նի մեծ արժեքի մասին դադափար կազմենք: Հա-
 յերենի համար այդպիսի բառարան մինչև այդ չի
 եղել. Նոր Հայկազյան բառարանը, որ լավագույն

¹ Երկրորդ, լուսատիպ հրատարակությամբ լույս է
 տեսել Բեյրութում, 1955—1956 թթ.:

Հայերեն բառարանն է, զբաղարի բառերն է պարունակում միայն, ուրիշ բառարանները նույնպես Հայերենի այս կամ այն շրջանն են ընդգրկում: Մալխասյանցի այս բառարանը միակն է, որ ընդգրկում է Հայերեն լեզվի բոլոր շրջանները (հարկավ՝ գրերի գյուտից սկսած), որքանով այդ հնարավոր է եղել հեղինակի համար: Այդ մեծ ծրագրի իրականացմանը հեղինակը ձեռնարկել է 1922 թ. հունվարի 1-ից (Անդ, էջ՝ ԻԱ) և ավարտել է այն 1935 թ. մայիսի 24-ին: Ուշադիր քննությունը ցույց է տալիս, որ նա, ըստ.ամենայնի, կատարյալ է. թե՛ պարունակած բառամթերքով, թե՛ բառերի բազմաթիվ նշանակությունների բացատրությամբ՝ մանավանդ այդ նշանակությունների փոփոխման ու զարգացման տրամաբանական հաջորդականությունը պահպանելով, և թե՛ բազմաթիվ ոճերի պարունակությամբ գիրքն արդյունք է հեղինակի տքնաջան և հմուտ գիտական ուսումնասիրությունների: Հեղինակը յուրաքանչյուր բառ բացատրում է իր տարբեր նշանակություններով, ժամանակակից գրական, մասամբ էլ, զավառական բառերի յուրաքանչյուր նշանակության համար իբրև օրինակ՝ հակիրճ ֆրազներ տալով. զգալի տեղ են պրավում բառերի ոճային առումները, որոնցով չափազանց հարուստ է բառարանը. վերջապես արդի լեզվում գործածվող և չգործածվող բառերը տարբերելու համար հեղինակը գործածել է որոշ նշաններ՝ բառերի մոտ. գործնական տեսակետից

այդ ևս մեծ նշանակութիւն ունի: Այս բոլորի շնորհիւ է, ահա, որ բառարանը Հայ բառարանագրութեան լավագոյն կոթողներից մեկն է դառնում:

Իր գիտական գործունեութեան երկար տարիների ընթացքում Մալխասյանցն անդրադարձել է ինչպէս հայոց լեզվի գործնական, այնպէս էլ ընդհանուր տեսական շատ խնդիրների: Ընդհանուր լեզվաբանական-փիլիսոփայական հարցերի մասին առանձին գրքեր նա չի գրել, իհարկե. սակայն հայերենի այս կամ այն խնդրին նվիրված հոդվածների մեջ և հենց հայերենի այս կամ այն հարցը լուսաբանելու համար անդրադարձել է ընդհանուր լեզվաբանութեան առանձին սկզբունքներին: Այդ սկզբունքներից առաջինն ու զլխավորը լեզվի պատմական զարգացումը, և լեզվի ու նրանով խոսող ժողովրդի (ցեղի, ազգի) մտավոր զարգացման միջև եղած կապն է, որ ճիշտ կերպով դիտել է նա: Այսպէս, 1910 թ. Թիֆլիսում կարդացել է մի դասախոսութիւն հայոց լեզվի պատմութեանը նվիրված, որի համառոտ բովանդակութիւնը՝ իր իսկ շարադրանքով, հրատարակված է «Մշակ»-ում: Այդ դասախոսութեան մեջ նա ուղղակի զարգացնում է այն տեսակետը, որ լեզուն, մանավանդ բառամթերքը, ներկայացնում է ժողովրդի քաղաքակրթութիւնը, իսկ լեզվի բառամթերքի պատմութիւնն այդ լեզվով խոսող ժողովրդի քաղաքակրթութեան պատմութիւնն է. «Բառերի միջոցով մենք կարող ենք հասկացողութիւն կազմել որեւէ

Ժողովրդի քաղաքակրթության ընթացքի մասին...
Եթե հնարավոր լիներ հայոց լեզվի այնպիսի մի
բաղմահատոր բառարան կազմել, որի յուրաքան-
չյուր հատորը պարունակելիս լիներ յուրաքանչյուր
դարում լեզվի մեջ գործածված բոլոր բառերը,
սկսած ութերորդ դարից Քր. առաջ մինչև մեր օրե-
րը, ապա այդ 27 հատորները միմյանց հետ համե-
մատելիս, մենք կկարողանայինք ճշգրիտ գաղա-
փար կազմել, թե որ դարում ազգը ինչ բանում ինչ
առաջադիմություն կամ հետադիմություն է արել
և որ դարում ո՛ր ազգի ազդեցության է ենթարկվել:
Բայց այսպիսի բառարան մինչև հինգերորդ դարը
Քր. հետո՝ ունենալ չենք կարող... Հինգերորդ դա-
րից հետո արդեն կարելի է դարից դար բառարան-
ներ կազմել և նրանց միջոցով ուսումնասիրել
ազգի քաղաքակրթության և կրած ազդեցություն-
ների ընթացքը» («Մշակ», 1910, № 244):

Ինչպես տեսնում ենք, հեղինակը իրավացիո-
րեն լեզվի բառապաշարը և ընդհանրապես լեզուն
համարում է ժողովրդի (ցեղի, ազգի) քաղաքա-
կրթության արտահայտիչը: Միաժամանակ, հենց
այս սկզբունքից ելնելով էլ նա լեզուն համարում
է ոչ թե անհատի, այլ ազգի կամ ցեղի ընդհանուր
սեփականությունը, հակադրվելով հոգեբանական
ինդիվիդուալիզմի ուղղությանը՝ լեզվաբանության
մեջ: Ի դեպ, այդ ուղղությանը նա հակադրվել է
նաև մի այլ, ավելի մասնավոր, բայց տեսականո-
րեն կարևոր հարցում: «Հայցական հոլովը մեր աշ-

խարհաբարի մեջ» հողվածում («Նոր-Դարաց», 1908—1909), Մալխասյանցը, հակադրվելով Մանուկ Աբեղյանին և բնորոշելով հոլովն իբրև ձևի ու բովանդակության միասնություն և քննելով աշխարհաբարի հոլովները ոչ միայն ձևական կողմով, այլև իրենց բովանդակությամբ, ճիշտ կերպով այն տեսակետն է պաշտպանում, թե աշխարհաբարում հայցական հոլով գոյություն ունի:

Ընդունելով լեզվի պատմական դարգացումը, Մալխասյանցն ընդունում է նաև լեզվաբանական անընդհատությունը, որ, ինչպես գիտենք, սոցիալոգիական ուղղության բնորոշ դրույթներից մեկն է, և պատկերավոր ձևով բացատրում է այդ երևույթը. «Լեզուն որչափ շատ է գործածվում, կամ ալլապես՝ որչափ հին է, այնքան ավելի է դարգանում: ...Ինչպես որ ջուրը յուր հունով անցնելով շարունակ զարկվում է հունին և ասիերին, տանում է յուր հետ թեթև նյութերը, հալում է կակուղները և հղկում կարծր քարերը, նույնպես և գործածությունը մաշում է լեզուն, դուրս է ձգում շատ բաներ ու ձևեր, որոնք ժամանակին համապատասխան չեն, հարթում սղում է բաներ ու քերականական ձևեր» (Գրաբարի համաձայնությունը, էջ 9): Լեզվի այս անընդհատաբար կատարվող փոփոխության համար հեղինակը բազմաթիվ ու բազմատեսակ պատճառներ է թվում և, որ կարևորն է, այդ փոփոխությունները դիտում է ոչ թե որպես «անհատական լեզուների» միջև եղած տարբերություննե-

րի, այլ նույն լեզվով խոսող հանրության տնտե-
սական պայմանների, սովորությունների, ինչպես
և ֆիզիոլոգիական առանձնահատկությունների ու
աշխարհագրական պայմանների արդյունք. «Լեզվի
զարգացումը հետևանք է ժողովրդի զարգացման
մտավորապես և տնտեսապես: ... «...Բառերն ու
քերականական ձևերը... ժամանակի ընթացքում...
(ենթարկվում են)... փոփոխությունների, և ամեն
մի ազգի մոտ առանձին եղանակով, նայելով յու-
րաբանչյուր ժողովրդի պարապմունքին, սովորու-
թյուններին, կազմվածքին, կլիմային և այլն» (Անդ,
էջ 7—8): Այսպիսի փոփոխությունների շնորհիվ մի
լեզվից ժամանակի ընթացքում կարող են առա-
ջանալ տարբեր բարբառներ ու սրանք էլ ավելի
հեռանալով միմյանցից՝ դառնալ առանձին լեզու.
այստեղից էլ, ահա, կատարվեն ցեղակից լեզուներ-
ըր, որոնք ծագում են մի նախալեզվից. այդպես
առաջացել են հնդեվրոպական լեզուները մի նա-
խալեզվից». հեղինակն, այդպիսով, ընդունում է թե
նախալեզվի, և թե նախացեղի գոյությունը. «Հըն-
դիկ-եվրոպական լեզուներով խոսող ազգերի նախ-
նիները, ինչպես ենթադրում են համեմատական
լեզվագիտություն և ազգագրությունը՝ բնակելիս
են եղել միասին ամենահին ժամանակներում և
խոսելիս են եղել միևնույն լեզվով, որ այժմ կորել
է: Այս հնդիկ-եվրոպական նախալեզուն, հար-
կավ, դեռ շատ զարգացած չէ եղել, որովհետև լեզ-
վի զարգացումը հետևանք է ժողովրդի զարգաց-



ման մտավորապես և տնտեսապես, մինչդեռ այդ լեզվով խոսող ժողովուրդը հրեի պարապելիս է հղել խաշնարածությամբ և երկրագործությամբ և հավանորեն չէր հասել բարձր զարգացման: Այս ժողովուրդն այլ և այլ ժամանակներում, բայց դեռ նախապատմական դարերում, դադթել է այլ և այլ կողմեր, մանավանդ դեպի արևմուտք (Եվրոպայի այժմյան տեղերը) և նոր հասարակական կազմակերպություն ընդունելով՝ ապրել է առանձին ցեղերով և ազգերով (հույները, լատինները՝ Հարավային Եվրոպայում, կելտերը՝ Միջին Եվրոպայում, սլավոնները՝ Արևելյան Եվրոպայում, արիները՝ Պարսկաստանում, հայերը՝ Փոքր Ասիայում և այլն), և այսպես առանձնացած այդ նոր ազգերը, որոնք սկզբից նույն լեզվով էին խոսում՝ ժամանակի ընթացքում ինքնուրույն զարգանալով՝ նոցա լեզուներն ևս սկսան ինքնուրույն զարգանալ, միմյանցից անկախ... Այս կերպով մի նախալեզուն ժամանակի ընթացքում այլ և այլ ճյուղեր արձակեց, ինքը դարձավ մայր լեզու, իսկ նորա ճյուղերը դարձան նորա դստերը և զույրերը միմյանց մեջ: Այս զույր-լեզուները սկզբում, երբ նոցա մեջ տարբերությունը դեռ շատ չէր, և նոցանից մինով խոսողը կարող էր հասկանալ մյուսով խոսողին՝ իսկապես բարբառներ էին մայր լեզվի և միմյանց վերաբերությամբ: Իսկ երբ ժամանակ անցնելով նոքա առանձին զարգանալով բառերի և քերականական ձևերի կողմից՝ միմյանցից շատ

հեռացան, այնպես որ նոցա մեջ արտաքին հայացքով նմանություն չէր կարելի գտնել՝ նոքա կոշիկ-ցան առանձին լեզուներ» (Անդ, էջ 7—8)։ Այսպես ընդունելով լեզուների ցեղակցության ու նախա-լեզվի տեսությունը հատկապես հնդեվրոպական լեզուների վերաբերմամբ, հեղինակն անցնում է հայերենին և ընդունում, որ «Հայերեն լեզուն պատկանում է հնդիկ-եվրոպական լեզվախմբին» (Անդ, էջ 5)։ Հնդեվրոպական լեզուների շարքում հայերենի գրաված դիրքի վերաբերմամբ նա արտահայտվում է հյուբշմանյան տեսակետով, այսինքն՝ ընդունում է հայերենը որպես ինքնուրույն, անկախ լեզու. «Այս լեզուներից մեկն է և հայերենը, որ առաջ է եկել հնդիկ-եվրոպական մայր լեզվից և քույր է հունարենին, հին պարսկերենին, կելտերենին, սլավոներենին և այլն» (Անդ, էջ 8)։ Մի այլ տեղ՝ Հյուբշմանի մասին գրած յուր հոդվածում, նա նույնպես այդ տեսությունն է պաշտպանում, գտնելով, որ այդ բանի հաստատումը Հյուբշմանի մեծագույն ծառայությունն է հայերենի ուսումնասիրության գործին. «Այնքան մեծ է հանգուցյալ գիտնականի (Հյուբշմանի—է. Ա.) մատուցած ծառայությունը հայերեն լեզվի ուսումնասիրության գործում, որ առանց չափազանցության մեջ ընկնելու, կարելի է վստահ լսել, թե հին և նոր հայադետներին ոչ ոք նրան չէ հավասարվել. նրա ուսումնասիրությունների շնորհիվ՝ հայերենը իբրև անկախ ոստ հնդկա-եվրոպական լեզվաբնի և իբրև

միտակ ներկայացուցիչ այդ ստաի (սրովհետեւ ուրիշ-
 ները, օր. սլավոն-լիթվանյանը, իտալականը տաս-
 նյակ հյուլավորութիւններ ունին) մեծ կարևորու-
 թիւն ստացավ... Հայերենի դիրքը վերջնականա-
 պես որոշվեց հնդկա-եւրոպական լեզուների շար-
 քում—մի շատ պատմավոր տեղ» («Մշակ», 1908,
 № 19): Խոսելով հայերենի և մյուս հնդեւրոպա-
 կան լեզուների զարգացման ընթացքի մասին, հե-
 ղինակը գտնում է, որ հայերենն ամենից ավելի
 փոփոխված և ամենազարգացած լեզուներից մեկն
 է. «Հայերենը հնդիկ-եւրոպական լեզուների շար-
 քում ամենահին և ամենազարգացած լեզուներից
 մեկն է: Բառերի սղման և ձայների փոփոխման
 կողմից, համաձայն խոսող ժողովրդի և նորա երկ-
 րի պայմաններին՝ նա հասել է վերին աստիճանի
 զարգացման, գրեթե այժմյան ֆրանսերենին հա-
 վասար, այնպես որ անփորձ աչքը դժվարութեամբ
 կարող է նկատել նմանութիւն հայերեն բառի և
 նորա նախատիպ հնդիկ-եւրոպական ձևի մեջ...
 Քերականական ձևերի մեջ հայերենը կորցրել է
 սեռերը գոյականների, ածականների և դերանուն-
 ների մեջ (թեպետ հետքերը տեղ տեղ երևում են),
 որ մյուս հնդիկ-եւրոպական լեզուներն ունին,
 բացի մի երկուսից, որոնք հայերենի նման կորց-
 րել են. կորցրել է երկակի թիվը գոյականների,
 դերանունների և բայերի մեջ... կորցրել է ածա-
 կանների բաղդատական և գերադրական աստի-
 ճանների ձևերը, որոնք փոխարինել է նոր կազմու-

թյամբ, կորցրել է նախնական հարակատարը, որ կազմվում էր արմատի կրկնությամբ (մնացել է միայն աւ-աւի բայը), որի փոխանակ կազմել է նոր բաղադրյալ հարակատար և այլն։ Հոլովների մեջ կորցրել է եզակի ուղղականի և հայցականի վերջավորությունները և ներգոյականը, որ սկզբում հատուկ վերջավորություն ուներ. բայց և այնպես հոլովներն հայերենում ավելի լավ են պահպանվել քան հունարենում, լատիներենում, հին և նոր պարսկերենում և այլն։ Այս հնության կամ դար-դացման պատճառով է, որ հայերենում բառերն ու քերականական ձևերն ավելի են հեռացել նախնական ձևերից և իրանց ազդային կերպարանքն են ստացել» (Գրաբարի համաձայնությունը, էջ 9—10)։ Ինչպես տեսնում ենք, հայերենի դարդացման կբաժ փոփոխությունների և իր նախնական վիճակից չափազանց հեռացած լինելու մասին Մալխասյանցը ճիշտ նույն ձևով է արտահայտվում, ինչպես Մեյեն, իհարկե այս չափոք է դիտել իբրև կրկնություն։ Մեյեն, ինչպես գիտենք, այդպիսի կարծիք հայտնել է յուր «Esquisse»-ի մեջ, որ լույս է տեսել ավելի ուշ, քան Մալխասյանցի «Գրաբարի համաձայնությունը»։ այնպես որ, կարող ենք ասել, թե Մալխասյանցն անկախաբար այն եզրակացության է հանգել, ինչ որ հետագայում մանրագնին ուսումնասիրությունք ապացուցել է Մեյեն։

Այսպէս, ընդունելով հայերենի ցեղակցությունը հնդեվրոպական լեզուների հետ և այդ լեզուների շարքում նրա գրաված անկախ դիրքը, հեղինակը համառոտակի խոսում է նաև մինչմատենագրական շրջանում հայերեն բարբառների դոյության մասին: Եւակետ ունենալով մի կողմից այն սկզբունքը, որ լեզուներն աստիճանաբար զարգանում ու ճյուղավորություններ են տալիս, մյուս կողմից այն հանգամանքը՝ որ Հայաստանը թե՛ տնտեսապէս և թե՛ քաղաքականապէս բաժանւած է եղել բազմաթիւ նախարարությունների միջև, որոնք միշտ չէ, որ սերտ համագործակցության մեջ են եղել, իսկ հաճախ էլ և՛ իրարից, և՛ կենտրոնական իշխանությունից անկախ ու կտրոււած են եղել, հեղինակը եզրակացնում է, թե մինչմատենագրական շրջանում էլ հայերեն բարբառներ պիտի լինեին. «Ինչպէս հնդիկ-եվրոպական լեզուներն սկզբում բարբառներ էին կազմում նախալեզւի վերաբերութեամբ՝ այնպէս էլ նոքա առանձին լեզուներ դառնալով՝ իրանք եղան մայր լեզու և տվին իրանց ճյուղերը կամ բարբառները: Հայերենն ևս նախապատմական ժամանակում անշուշտ ունեցել է այլ և այլ բարբառներ, որոնց մասին հիշատակութիւն չունինք, որովհետև այդ հին ժամանակից ոչ արձանագրություններ կան մնացած և ոչ պատմութիւն: Այդ բարբառների դոյությունը մենք հետեցնում ենք ընդհանուր օրինքով—չկա լեզու, որ չունենա յուր բարբառները,—

և Հայաստանի աշխարհագրական դիրքով, որովհետև երկիրը դժվարանցանելի լեռներով ու գետերով առանձին գավառների բաժանված լինելով, արտադրեց ինչպես քաղաքականապես կես-անկախ նախարարություններ՝ նույնպես և լեզվի կողմից՝ միմյանցից բավական տարբերվող բարբառներ, որովհետև հզոր իշխանություն գոյություն չունենալով, որ բոլոր երկրի կառավարությունը կենտրոնացնեի, չլինելով գիր և գրականություն, որ մի լեզու ընդհանրացնեի ամեն հայի համար՝ յուրաքանչյուր նահանգ և գավառ ապրում էր յուր առանձին կյանքով, զարգանում էր ինքնուրույն պայմանների մեջ, ուրեմն և յուրաքանչյուր լեզուն առանձին անկախ ուղղությամբ պիտի զարգանար» (Անդ, էջ 10)։ Շարունակելով յուր դատողությունները, հեղինակը գտնում է, որ հինգերորդ դարում՝ գրերի գյուտի ու մեր մատենագրության սկզբնավորման ժամանակ այդ բարբառներն առաջնցնող նախնական հայերեն լեզուն այլևս գոյություն չունեի. կային նրանից առաջացած բարբառները միայն. «նախնական հայերենը, որից այդ բարբառները ծագել էին՝ հավանորեն գոյություն չունեի դարում. սա ապացուցվում է թե լեզվաբանական հետազոտություններով, և թե այսպիսի տրամաբանական դատողությամբ, որ եթե Ն դարում գոյություն ունեցող բարբառը (գրաբարը) հազար տարի էլ գոյություն չունեցավ իբրև բնական, կենդանի լեզու՝ սորանից կարելի է մակաբերել, որ

նորա մայր լեզուն էլ (սկզբնական հայերենը) դժ-
վարավ կարող էր երկու-երեք հազար տարի զո-
յություն ունենալ անփոփոխ կերպով. այլ թե նա
այդ առնվազն երկու-երեք հազար տարվա ընթաց-
քում ենթարկվել էր ձայնագիտական և քերական
բազմաթիվ փոփոխությունների և այլևայլ
բարբառներ առաջ բերելով ինքը մեռել էր» (Անդ,
էջ 11): Այդ բարբառներից մեկն է ահա, որ գրերի
գյուտից հետո մատենագրության լեզուն դարձավ
և որ կոչվում է գրաբար. այդ բարբառը՝ հեղինակի
կարծիքով՝ արարատյան բարբառն է եղել. «Այն
լեզուն, որով Ս. Սահակ և Մեսրոպը թարգմանե-
ցին Ս. Գիրքը՝ Հայաստանում գոյություն ունեցող
բարբառներից մեկն էր լինելու, հավանորեն Այրա-
րատյան բարբառը, իբրև Հայաստանի ընդարձա-
կագույն և կենտրոնական նահանգի լեզուն, որ
ամենից շատ խոսող ունեւ, ուրեմն և ավելի ընդ-
հանրացած էր, և բացի դորանից իբրև լեզու տիրող
իշխանության, որ նստում էր նույն նահանգում, և
այդ իշխանությունը շրջապատող ազնվականների՝
ավելի կոկված, մշակված ու հարուստ պետք է լի-
ներ, քան մյուս հայերեն բարբառները» (Անդ, էջ
11—12):

Ամփոփելով Մալխասյանցի այն տեսակետնե-
րը, որոնց մասին խոսեցինք մինչ այժմ, գալիս
ենք հետևյալ հղրակացության. Մալխասյանցն
ընդհանուր լեզվաբանական որոշ հարցերում ըն-
դունում է երիտօրակականների սկզբունքները, ինչ-

պէս հնչյունական օրինքների անխախտությունը, լեզվաբանական անընդհատությունը. բայց ինչպէս հայտնի է, այդ երկու սկզբունքներն ընդունում են նաև սոցիոլոգիական դարոցին պատկանողները, այնպէս որ դրանից չի կարելի հետեցնել, թե նա երիտքերականներին է հետևում: Դրանից ավելի հիմնական հարցում նա երիտքերականներից բոլորովին հեռանում է. այն ժամանակ, երբ երիտքերականները ընդունում են միայն անհատական լեզուների գոյությունը, Մալխասյանցն ընդունում է ժողովրդի, հանրության (ազգի, ցեղի) լեզուն և, ինչպէս մեր մեջ բերած հատվածներից պարզորեն երևում է, լեզվի զարգացումը կապում է ժողովրդի պատմության հետ, նրա տնտեսական, քաղաքական պայմանների, ինչպէս և աշխարհագրական ու ֆիզիոլոգիական առանձնահատկությունների հետ: Վերջապէս հայերենի զարգացման, ցեղակից լեզուների համեմատությամբ հայերենի շատ ավելի փոփոխված լինելու մասին արտահայտած յուր կարծիքներով նա կանգնած էր, ինչպէս՝ տեսանք, հայերենի համեմատական ուսումնասիրության արդիական մակարդակի վրա:

Ի պատիւ Մալխասյանցի պետք է ասել, որ իր բոլոր ուսումնասիրությունների մեջ էլ նա առաջնորդվել է պատմականության սկզբունքով, որ և նրա գիտական ժառանգության ամենատարժեքավոր կողմերից մեկն է: Այդ սկզբունքով է կազմել նա նաև իր քառահատոր բառարանը, որի

մեջ բառերի զանազան իմաստները, ըստ հնարա-
վորին, պատմական հաջորդականությամբ է բերում
և, այդպիսով իսկ, աշխատում ցույց տալ բառ-
իմաստի պատմական զարգացումը: Վերջապես,
պատմականության դիրքերից ելնելով է, որ նա
աշխատել է լուծել, և մեծ մասամբ ճիշտ կերպով
է լուծել, ժամանակակից հայոց լեզվին վերաբերող
զանազան վիճելի հարցեր. դրանցից առանձնապես
նշելի են հայերենի ուղղագրությանը վերաբերող
նրա բազմաթիվ հոգվածներն ու առաջարկները,
որոնցից կարևորագույններն ընդունված են Տեր-
մինաբանական կոմիտեի որոշմամբ, ինչպես և
հայոց լեզվի գիտատեսխնիկական տերմինաբանու-
թյան ստեղծման մեջ նրա կատարած դերը: Հեղի-
նականների տարբեր խմբերի հետ նա մեծ դեր է կա-
տարել զանազան բնագավառների (իրավաբանա-
կան, երկաթուղային, շինարարական) հայերեն
տերմինաբանության ստեղծման գործում:

Իր գիտական բեղմնավոր գործունեությամբ
Ստեփան Մալխասյանցն ավելի քան կես դարի
ընթացքում մեծապես նպաստել է հայագիտության
զարգացմանը և թողել է մեզ գիտական մի մեծար-
ժեք ժառանգություն, որ ժամանակակից հայագի-
տության անկապտելի հարստությունն է կազ-
մում:

ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԻՐԼՒՈԳՐԱՖԻԱ.

1878

Ինֆնախոս ձայնագիր: Արարատ, 1878, № 4, էջ 146—148:
Փարիզի աշխարհահանդեսը [1878 թ.]: Արարատ, 1878,
№ 5, էջ 186—192:

Դարուն: [Բանաստեղծություն]: Արարատ, 1878, № 3,
էջ 109—110:

Հայն ի գերություն: [Բանաստեղծություն]: Արարատ, 1878,
№ 3, էջ 112:

Թարգմ. Մնայուն գագերի հեղուկահալը և ջրածնի պնդա-
նալը: (Ռաուլ Պիկտեի և Կալլտեի փորձերը): Արարատ, 1878,
№ 3, էջ 100—105:

Թարգմ. [Շաֆհաուզեն]. վայրենիների վիճակը: Արարատ,
1878, № 8—9, էջ 342—346, № 10, էջ 389—399:

Թարգմ. Հյուզո Վ. Մովսես ի նեղոսի: [Բանաստեղծու-
թյուն]: Արարատ, 1878, № 3, էջ 105—108:

Թարգմ. Հյուզո Վ. Հափշտակություն մտաց: [Բանաստեղ-
ծություն]: Արարատ, 1878, № 4, էջ 152:

Թարգմ. Հյուզո Վ. Հուրն երկնից: [Բանաստեղծություն]:
Արարատ, 1878, № 5, էջ 192—194, № 6—7, էջ 263—271:

Թարգմ. Ուրբ հայ տղա: [Բանաստեղծություն]: Արարատ,
1878, № 4, էջ 155—156:

Դրախոս. Այվազյան Գ. Նախակրթարան հայերեն գրաբար
լեզվի: Մասն Ա.: Տփլիս, 1878: Մշակ, 1879, 13/IX, № 155.
Էջ 1—2, 14/IX, № 156, էջ 1—2: Ստորագր.՝ ԵԱ:

Թարգմ. վայրենիների կրոնը: Արարատ, 1881, № 10,
էջ 547—564, № 11, էջ 607—614, 1882, № 8, էջ 248—251.
№ 9, էջ 295—301:

Թարգմ. Բռնի միություն հայոց Լեհաստանի ընդ եկե-
ղեցվոյն Հռովմա: Ժամանակակից հիշատակարան: ՍՊԲ, 1884:
68, 270, 8 էջ:

Ստեփանոսի Տարոնեցվո Ասողկան Պատմություն տիեզե-
րական [Ստ. Մալխասյանցի առաջաբանով և ծանոթագրու-
թյուններով]: 2-րդ տպագր.: ՍՊԲ, տպ. Ի. Ն. Սկորոխոզովի.
1885: 48, 439 էջ:

Պատմություն Ղևոնդյա Մեծի վարդապետի Հայոց: 2-րդ տը-
պագր. [Կ. Նզյանի առաջաբանով և Ստ. Մալխասյանցի ծա-
նոթագրություններով]: ՍՊԲ, տպ. Ի. Ն. Սկորոխոզովի, 1887:
84, 206 էջ: (Թիֆլիսի Հայոց հրատ. բնկ. հրատ.):

Յանկ հատուկ անվանց: «Թովմայի վարդապետի Արծ-
րունվո Պատմությունն տանն Արծրունյաց» գրում: [Ուսում-
նասիրություն Գ. Պատկանյանի]: ՍՊԲ, տպ. Ի. Ն. Սկորոխո-
զովի, 1887, էջ 327—343:

Թարգմ. Նեմայիր Վ. Լիւր քաղալուր: Ողբերգութիւն երկ
արարւածով: (Հալիւլաձ): Արաքս, 1887, գիրք Ա, էջ 1—51,
1888, գիրք Բ, էջ 52—184:

Առ զեռն քարեկացիոց: [Բանաստեղծութիւն]: Արաքս,
1887, գիրք Ա, էջ 131—132: Ստորագր.՝ Ս. Մ.:

Томсон А. И. Лингвистические исследования. Т. I
(гл. I). Краткий очерк фонетики и морфологии Ахал-
цыхского говора. СПб, тип. Е. Евдокимова, 1887, с. 1—
120. [Ստ. Մալխասյանցի մասնակի մասնակցութեամբ]:

1 8 8 8

Թարգմ. Նեմայիր Վ. Լիւր քաղալուր: Ողբերգութիւն երկ
արարւածով¹:

Նույնը՝ առանձին հրատ. ՍՊՐ, 1888, տպ. Ի. Ն. Սկորո-
խովսկի: 13, 184 էջ:

Առաջարան: [Սե, դե, նե դերանունների և լ'-ի զործա-
ծութեան անհրաժեշտութիւնը]: Շերտայիր Վ. «Լիւր քաղալուր»
գրքում: ՍՊՐ, 1888, էջ 7—Թ:

1 8 8 9

Քերովրե Պատկանյան: [Մահւլան աորիլ]: Արաքս, 1889,
գիրք Ա, էջ 87—94: Ստորագր.՝ Ստ. Մ.:

Ի՞նչ տաղաչափութիւն ունի «երկներ երկին և երկիր»
երգը: Արձագանք, 1889, № 17, էջ 254—256:

Գրախոս. Иоаннисянц А. Русско-армянский словарь.
Т. 1. А-Н. Тифлис, тип. О. Мартиросянца, 1888. Արաքս,
1889, գիրք Ա, էջ 137—160:

Թարգմ. Թոշնակներ: [Բանաստեղծութիւն Վ. Ի. Վոդովո-
զովից]: Արաքս, 1889, գիրք Ա, էջ 110: Ստորագր.՝ Ս. Մ.:

1 8 9 0

Աստղիկ: [Բանաստեղծութիւն]: Արաքս, 1890, գիրք Բ,
էջ 22: Ստորագր.՝ Ստ. Մ.:

¹ Տե՛ս 1887 թ.:

Գրաբարի հոլովումը, խոնարհումը և նախդիրները: Թիֆլիս, տպ. Հ. Մարտիրոսյանցի, 1891: 52 էջ, 1 թ. աղյուսակ: (Հրատ. Կենտրոնական գրավաճառանոցի):

[Ն. Մառի Երեմ հոգվածների մասին. 1. Գրախոսություն Ա. Թումանի «Թիֆլիսի ժամանակակից հայերեն լեզվի բերականություն» (ռուսերեն) աշխատության մասին: 2. Հայերեն «սեպում» և վրացերեն «սեփե» բառերի ստուգաբանությունը: 3. Ամառնային հանապարհորդությունից դեպ ի Հայս. նկատողություններ և հայերեն ձեռագիրներից հաղվածքներ]: Արձագանք, 1891, № 9, էջ 134—135, № 10, էջ 152—155:

Գրախոս. Բալուդյան Ջ. Բանասերդություններ: Մոսկվա, 1891: Արձագանք, 1891, № 12, էջ 179—182, № 13, էջ 194—197, № 14, էջ 215—216:

Գրախոս. Հայգե Պ. Բեաքրիչե: Թարգմ. Փ. Վարդանյան: Թիֆլիս, 1891: Արձագանք, 1891, № 6, էջ 90—93, № 8, էջ 119—120: Ստորագր.՝ Ստ. Մ.:

Գրախոս. Շեքմազանյան Գ. Նյութեր ազգային պատմության համար: Երեկի հայկազունի Պարսկաստան: Ռուստով-Դոն, տպ. Հ. Տեր-Աբրահամյանի, 1891: Արձագանք, 1891, № 5, էջ 70—71: Ստորագր.՝ Ստ. Մ.:

Գրախոս. Տաշյան Հ. Ազարանգեղոս առ Գեորգա ասորի եպիսկոպոսն և ուսումնասիրություն Ազարանգեղյա գրոց: Վիեննա, Մխիթարյան տպ., 1891: Արձագանք, 1891, № 3, էջ 41—43:

Գրախոս. Տոլստոյ Լ. Կոլումբ: Թարգմ. Փ. Վարդանյան: Թիֆլիս, 1891: Արձագանք, 1891, № 6, էջ 90—93, № 8, էջ 119—120: Ստորագր.՝ Ստ. Մ.:

Գրախոս. Տոլստոյ Լ. Ռոբինզոն: Թարգմ. Փ. Վարդանյան: Թիֆլիս, 1891: Արձագանք, 1891, № 6, էջ 90—93, № 8, էջ 119—120: Ստորագր.՝ Ստ. Մ.:

Գրախոս. Քաչունի Մ. Բաղդիր արվեստից և զիտությանց և զեղեցիկ դպրությանց: [Գաղղիերեն-հայերեն]: Հտ. 1. Վենն-

տիկ, տպ. Ս. Ղազարի, 1891: Արձադանք, 1891, № 4, էջ 56—57:

Նամակ խմբագրին [Կ. Յաղուբյանի «Հայերեն-ռուսերեն բառարանի» մասին Սո. Լիսիցյանի գրախոսականի առթիվ]: Մուրճ, 1891, № 10, էջ 1258—1260:

Նամակ խմբագրին [Մ. Լեւոնտովի «Մեր ժամանակի հերոսի» քաղցամուրջունը քյուրիմացաբար Սո. Մալխասյանցին վերագրելու առթիվ]: Մշակ, 1891, 23/XI, № 133, էջ 2—3:

1892

Գրաբարի համաձայնությունը: Թիֆլիս, տպ. Հ. Մարտիրոսյանցի, 1892: 2, 176 էջ: (Հրատ. Կենտրոնական գրավաճառանոցի):

Թարգմ. Շեքսպիր Վ. Մակբեթ: Ողբերգություն հինգ արարվածով: Թիֆլիս, տպ. «Արոր» Տ. Նազարյանի, 1892: 18, 108 էջ: (Հրատ. Թիֆլիսի Հայոց հրատ. ընկ.):

Հայկական տաղաչափություն. հիմնական կանոններ: Շեքսպիր Վ. «Մակբեթ» գրքում: Թիֆլիս, տպ. «Արոր» Տ. Նազարյանի, 1892, էջ 5—10:

Մի մատենագիտական նկատողություն: [Ա. Տեր-Միֆեյլյանի «Աստղիկա պատմության կորած գլուխները» հոդվածի առթիվ]: Մուրճ, 1892, № 9, էջ 1379—1380:

Մ. Խորենացու նոր աղբյուրը: [Ս. Կարբիբի «Մ. Խորենացու մեկ նոր աղբյուրը» հոդվածի շուրջը]: Մուրճ, 1892, № 12, էջ 1852—1863:

Ռափայել Պատկանյան: [Մահվան առթիվ]: Մուրճ, 1892, № 7—8, էջ 1354—1359:

Գրախոս. Եղիշեի Պատմություն վարդանի և հայոց պատերազմի համար: Թարգմ. Հ. Ղուկասյանց: Թիֆլիս, տպ. «Արոր» Տ. Նազարյանի, 1891: Մուրճ, 1892, № 1, էջ 135—148:

Գրախոս. Եղիշեի Պատմություն վարդանանց ըստ Անձևացյաց օրինակի: (Ծանոթություններով և հայ-ռուսերեն բառ-

գրով լույս ընծայեց Խ. Հովհաննիսյանը): Մասկվա, տպ.
Մ. Բարխուդարյանի, 1892: Մարմ, 1892, № 5, էջ 758—769:

Գրախոս. Կոնիբեր Ֆ. Կ. Արխանտելի սառնագործական և
մեկնությանց, հաղագս աշխարհի, հաղագս առաքինությանց և
մոլությանց և Պորփյուրի ներածության հունական բնագիր-
ների բաղդատություն հին հայերեն քաղվածությունների հետ:
Մշակ, 1892, 3/XII, № 139, էջ 2—3:

Գրախոս. Հարությունյանց Խ. Հայոց գիրք: Թիֆլիս, 1892:
Տարադ, 1892, № 48, էջ 621:

Նամակ խմբագրին: [Խ. Հովհաննիսյանի հրատարակած
«Եղիշեի Պատմություն Վարդանանց» գրքի շուրջը]: Մշակ,
1892, 8/IX, № 102, էջ 2:

Նամակ խմբագրին: [Խ. Հովհաննիսյանի հրատարակած
«Եղիշեի Պատմություն Վարդանանց» գրքի շուրջը]: Մշակ,
1892, 12/IX, № 104, էջ 1—2:

Նամակ խմբագրին [«Գրաբարի համաձայնությունը» գրքի
գրախոսականի առթիվ]: Մշակ, 1892, 24/XI, № 135, էջ 1—2:

Պատասխան «Արձագանք»-ին [Գրաբարի համաձայնու-
թյունը» գրքի գրախոսականի առթիվ]: Մշակ, 1892, 5/XII,
№ 140, էջ 2—3:

Ռեկալին ասող: [Գրիգոր Արծրունու անմահ հիշատակին]:
[Բանաստեղծություն]: Տարադ, 1892, № 50, էջ 647:

Վիեննայի երաժշտական ցուցահանդեսի առթիվ: Մշակ,
1892, 21/IV, № 44, էջ 2:

1 8 9 3

Գրիգոր Արծրունին և հայոց լեզուն: Մշակ, 1893, 14/X,
№ 1, էջ 3—4:

Երաժշտություն: [Դիտողություններ Մ. Եկմալյանի եռա-
ձայն և բառաձայն պատարագի երաժշտության մասին]: Տա-
րադ, 1893, № 6, էջ 94—95:

Նամակ խմբագրության: [Պատասխան Բաքումիից ուղարկ-
ված քղրակցության]: Արձագանք, 1893, № 124, էջ 3:

Գրախոս. Հաղորդումյանց Ի. Հայոց զիրք: Ռիֆլիս, 1892:
Տարադ, 1893, № 1, էջ 12—14, № 2, էջ 27—30, № 3, էջ 41—
43, № 4, էջ 54—59, № 5, էջ 71—72:

Գրախոս. История Армении Моисея Хоренского. Но-
вый перевод Н. О. Эмина. (С примеч. и прил.). Посмерт.
изд. М., Изд. Лазаревского ин-та восточных яз., 1893.
Տարադ, 1893, № 26, էջ 413—416:

Գրախոս. Daghaschian H. Grundung des Bagrati-
denreiches durch Aschot Bagratuni. Berlin, 1893. Մշակ,
1893, 9/XII, № 18, էջ 2—3: Ստորագր.՝ Ստ. Մ.:

1894

Մատենագրական հայացք: [Եվրոպական լեզուներով լույս
տեսած հայագիտական աշխատությունների համառոտ տեսու-
րյուն]: Մշակ, 1894, 29/IX, № 112, էջ 2:

Հայերեն հրատարակություններ 1892 թվին: [Համառոտ
տեսություն]: Մշակ, 1894, 13/I, № 4, էջ 1—2:

Ներսիսյան դպրոցի նոր կանոնադրությունը: Մշակ, 1894,
18/X, № 120, էջ 1—2: Ստորագր.՝ Ստ. Մ.:

Անհրաժեշտ կարիք: [Ուսուցիչների ցենզի հարցը]: Մշակ,
1894, 7/II, № 19, էջ 1—2:

Գրախոս. Խալարյան Գր. Ջենոբ Գլակ: [Համեմատական
ուսումնասիրություն]: Հ. Ա., 1893, №№ 3, 4, 5, 7, 9, 10.
Մշակ, 1894, 1/I, № 1, էջ 2—3: Ստորագր.՝ Ստ. Մ.:

Գրախոս. Март Н. Я. О начальной истории Армении
Анонима. К вопросу об источниках истории Моисея Хо-
ренского. Визант. временник, 1892, т. 2. Մշակ, 1894,
15/XI, № 132, էջ 1—2:

Նամակ խմբագրության: [Հաշվետվություն Ղարսի և Երե-
վանի նահանգի կարոտյալների համար հանգանակած զումարի
բաշխման մասին]: Մշակ, 1894, 19/III, № 32, էջ 2: Ստո-
րագր. թվում՝ Ստ. Մալխասյան:

«Բազմավեր» և Կովկասի հայ լրագրության լեզուն:
Մշակ, 1895, 21/IX, № 108, էջ 1—3, 23/IX, № 109, էջ 1—3:

Գրականությունը ուսանայող մեջ 1894 րվին: Մշակ,
1895, 1/I, № 1, էջ 3:

Գառնուկը: [Այլարանական գրույց քուրմանայերի վիճակի
մասին]: Մշակ, 1895, 8/IV, № 39, էջ 1—2:

Թուրք մուլայի կարծիքը Թուրքիայի մասին: Մշակ, 1895,
6/VII, № 77, էջ 2:

Ներդաշնակված պատարագի երգեցողություն [Մ. Նկմալ-
յանի ղեկավարությամբ]: Մշակ, 1895, 30/III, № 37, էջ 2:

Քաղաքականությունը և հայոց հարցը: Մշակ, 1895, 27/V,
№ 60, էջ 3: Ստորագր.՝ Ստ. Մ.:

Գրախոս. Hubschmann H. Armenische Grammatik.
Leipzig, 1895. Մշակ, 1895, 16/XII, № 145, էջ 2:

Գրախոս. Meghavorian H. Etude ethnographique et
juridique sur la famille et le mariage armeniens. Lau-
sanne. Մշակ, 1895, 26/I, № 10, էջ 2:

Գրախոս. Momsen Th. Die armenischen Handschriften
der Chronic des Eusebius. Մշակ, 1895, 22/VII, № 82,
էջ 3: Ստորագր.՝ Ստ. Մ.:

1896

Ուսումնասիրություն Փալստոս Բուզանդի պատմության:
Վիեննա, Մխիթարյան տպ., 1896: 59 էջ:

Նույնը՝ Հ. Ա., 1896, № 2, էջ 35—43, № 3, էջ 81—85,
№ 4, էջ 101—108:

Մատենագրություն: [Ն. Մառի Երեմ հոդվածների համա-
ռոտ տեսություն. 1. Мнимое географическое название
Бр'отастак в Истории Агафангела; 2. Рец. на арм.
книгу: Տեր-Մկրտչյան Գ. Հայկական. Ա.—ԺԲ. 3. Рец. на
арм. книгу: Հարություն Արարատյանի կեղծիքը. պարզեց
Ա[րիստակես] Ե[պիսկոպոս] Ս[եդրակյան]: Մշակ, 1896, 5/III,
№ 27, էջ 3: Ստորագր.՝ Ստ. Մ.:

Տեղեկություն: [Գր. Խալարյանի «Հայկական վեպը Մովսես Խորենացու պատմության մեջ» ուսումնասիրության նկատմամբ իր և Հյուրշմանի կարծիքների զուգադիպման մասին]: *Մշակ*, 1896, 10/XII, № 144, էջ 1—2:

Փոփրիկ վիճակագրություն: [Պետերբուրգի կայսերական հասարակական մատենադարանի 1883—1893 թթ. գործունեության մասին տրված տեղեկությունների շուրջը]: *Մշակ*, 1896, 12/XII, № 145, էջ 2: Ստորագր.՝ Ստ. Մ.:

Գրախոս. Ղազար Փարսեցու Հայոց պատմությունը և վաճառ Մամիկոնյանին գրած քննությունը: Փարզմ. Մինաս Բանանա Տեր-Պետրոսյանց: Ալեքսանդրապոլ, 1895: *Մշակ*, 1896, 13/II, № 18, էջ 2. Ստորագր.՝ Ստ. Մ.:

Գրախոս. Տաշյան Հ. Յուդակ հայերեն ձեռագրաց Մատենադարանի Մխիթարյան ի վիճակ: Վիճակ, Մխիթարյան տպ., 1896: *Մշակ*, 1896, 30/XI, № 140, էջ 3, 3/XII, № 141, էջ 2:

Գրախոս. Халатянц Г. Армянский эпос в истории Армении Моисея Хоренского. Опыт критики источников. Ч. 1—2. М., тип. В. Гатцук, 1896. *Մշակ*, 1896, 30/V, № 62, էջ 1—2, 1/VI, № 63, էջ 1—3:

Նամակ խմբագրության: [Կովկասի Հայոց բարեգործական ընկերության մարտի 3-ի ընդհանուր ժողովի մասին]: *Մշակ*, 1896, 29/II, № 25, էջ 2—3:

Նամակ խմբագրության: [Պատասխան «Արձագանք»-ին՝ Կովկասի Հայոց բարեգործական ընկերության ընդհանուր ժողովի կապակցությամբ]: *Մշակ*, 1896, 2/III, № 26, էջ 3—4:

Նամակ խմբագրության: [Կովկասի Հայոց բարեգործական ընկերության ընդհանուր ժողովի շուրջը]: *Մշակ*, 1896, 7/III, № 28, էջ 2:

Նամակ խմբագրության: [Մշակական Խ. Մալումյանի և նոր-դարական Ս. Հախումյանի միջև տեղի ունեցած միջադեպի շուրջը]: *Մշակ*, 1896, 14/V, № 55, էջ 3: Ստորագր. թվում՝ Ստ. Մալխասյանց:

Նամակ խմբագրության: [Թողո՛ւ Արասխանյանցի կողմից հասցված վերավորանքի դեմ]: Մշակ, 1896, 25/V, № 60, էջ 3:

1897

Բուլղնա և յուր վարդապետությունը: Կազմեց Ստ. Մ.: Թիֆլիս, տպ. Մ. Գ. Ռոտինյանցի, 1897: 7, 96 էջ: (Թիֆլիսի Հայոց հրատ. ընկ., 137):

Նամակ խմբագրության [«Բուլղնա»-ի գրախոսականի առթիվ]: Մշակ, 1897, 27/XII, № 152, էջ 4:

[Մարաբասի նորագյուտ հատակաորենների մասին Ա. Կարբիների նամակի շուրջը]: Մշակ, 1897, 9/I, № 3, էջ 2—3:

Գրախոս. Սոկրատա պատմություն եկեղեցական և վարժարանային Սեդրեստոսի եպիսկոպոսին Հռովմա: Աշխատասիրությանը Մեսրոպ Տեր-Մովսեսյանի: Վաղարշապատ, 1897: Մշակ, 1897, 27/IX, № 113, էջ 3—4:

Գրախոս. Տեր-Մկրտչյան Գ. Ազարանգեղոսի աղբյուրներից: էջմիածին, 1897: Մշակ, 1897, 20/II, № 21, էջ 2:

Գրախոս. Мсерянц Л. К интерпретации ванских надписей, М., 1897. Մշակ, 1897, 18/II, № 20, էջ 2. Ստորագր.՝ Ստ. Մ.:

Գրախոս. Мсерянц Л. Этюды по армянской диалектологии. Ч. 1. Сравнительная фонетика Мушского диалекта в связи с фонетикой грабара. М., 1897. Մշակ, 1897, 14/VI, № 69, էջ 2:

1898

Թարգմ. էրեւս Գ. Մարդ եմ: Թիֆլիս, տպ. Մ. Գ. Ռոտինյանցի, 1898: է, 428 էջ: (Կովկասի Հայոց հրատ. ընկ.):

Պատմական գրականություն: (Նորագույն կարծիքներ Մովսես Խորենացու Պատմության մասին): Մշակ, 1898, 13/VI, № 102, էջ 1—3:

Մի բանի խոսք մեր երկու գրական լեզուների մերձեցման մասին: Արարատ, 1898, № 3—4, էջ 128—137: Ստորագր.՝ Ս. Մ.:

Պրոֆեսոր Ն. Մառի կարծիքը վրացոց՝ ընդդեմ հայոց ուղղած վեճի մասին: Արարատ, 1898, № 2, էջ 75—78: Ստորագր.՝ Ս. Մ.:

Նորագույն կարծիքներ Մովսես Խորենացու մասին: Մշակ, 1898, 13/VI, № 120, էջ 1—3:

Գրախոս. Դադրաշյան Հ. Փավստոս Բուզանդացի և յուր Պատմության խաղախոսը: (Քննություն Խորենացու աղբյուրների մասին): Վիեննա, Մխիթարյան տպ., 1898: Մշակ, 1898, 5/XI, № 201, էջ 2—3, 6/XI, № 202, էջ 2—3, 10/XI, № 204, էջ 2, 11/XI, № 205, էջ 2:

Գրախոս. Մովսես Խորենացի. Հայոց պատմություն: Աշխարհարար բարգմանեց և լուսաբանեց Խորեն Եղ. Ստեփանն: (Հիմնովին սրբագրված և բարեփոխված աշխարհարար և տպագր.): ՍՊԲ, տպ. Լիբերմանի, 1898: Մշակ, 1898, 11/IV, № 58, էջ 1—2:

Նամակ խմբագրության: [Հայոց հրատարակչական ընկերությունից տպագրության առաջադրանքի իրավունք ստանալու մասին]: Մշակ, 1898, 22/IV, № 65, էջ 3:

Քննադատող և քննադատվող: [Հայոց հրատարակչական ընկերությունից տպագրական առաջադրանքներ . ստանալու կարգի մասին]: Մշակ, 1898, 6/V, № 75, էջ 2:

1 8 9 9

Դասընթաց հայոց մատենագրության պատմության: Ներսիսյան հոգևոր դպրոցի աշակերտների համար: Թիֆլիս, Վիմագրատուն Շահբազյանցի, 1899: 290 էջ: [Ապակետիպ]:

Սեբեոսի պատմությունը և Մ. Խորենացի: Մատենագրական ուսումնասիրություն: Թիֆլիս, տպ. Մ. Դ. Ռոտինյանցի, 1899, 7, 118 էջ: (Թիֆլիսի Հայոց հրատ. ընկ., № 156):

Վրաց և հայոց հին գրականությունից: Մշակ, 1899, 21/V, № 91, էջ 1—2:

Գեորգյան նեմարան: [25-ամյա հոբելյանի առթիվ]: Մշակ, 1899, 24/IX, № 177, էջ 1—2, 25/IX, № 178, էջ 1—2:

Ներսիսյան դպրոցի բոշակարկղը: Մշակ, 1899, 5/II, № 22, էջ 1—2:

1 9 0 0

Համառոտ պատմություն Ներսիսյան Հոգևոր դպրոցի յոթանասունհինգամյա գոյության (1824—1899): Թիֆլիս, տպ. Կ. Մաքարիսյանցի, 1900: 214 էջ, 1 թ. պորտր.: (Հրատ. Ներսիսյան դպրոցի):

Հին մատենագրությունից: [Ն. Մառի երկու աշխատությունների մասին. 1. Ефрем Сирин. 2. Агиографические материалы по грузинским рукописям Ивера]: Մշակ, 1900, 29/XI, № 226, էջ 1—2:

Մի ֆիլ Վինակագրություն: [Ժողովրդի անի մասին]: Մշակ, 1900, 10/II, № 26, էջ 1—2:

Մի խոշոր ժառանգության գործ: Մշակ, 1900, 21/VI, № 113, էջ 1—2:

1 9 0 1

Հայագիտությունը XX դարի սկզբում: Մուրճ, 1901, № 1, էջ 157—169, № 2, էջ 192—205, № 3, էջ 128—142, № 4, էջ 101—119, № 5, էջ 160—171:

Մի նկատողություն Փալատոսի պատմության մասին: ZAPh, Bd. 1, 1901, H. 1, S. 64—66.

Գարեգին Զարբանալյան: [Մահվան առթիվ]: Մշակ, 1901, № 55, էջ 1—2:

Ղ. Ալիշանի գլուխ գործոցները: Մշակ, 1901, 17/XI, № 256, էջ 1—2:

Գրախոս. Անդրանիկ. Տերսիմ: (Ճանապարհորդություն և տեղագրություն): Թիֆլիս, 1901: Աղգաղբական հանդես, 1901, գիրք 7—8, էջ 518—524:

Գրախոս. Գիրմ բղրոց: Մատենագրություն նախնայց: (Սահակ Մեսրոպյան մատենագրաբան, և): Թիֆլիս, 1901: Մուրճ, 1901, № 11, էջ 223—229:

Դրախոս. Լեո. Հայկական տպագրություն: Մեր կյանքը, գրականությունը անցյալում: Հտ. 1. XVI—XVIII դար: Թիֆլիս, 1901: Մուրճ, 1901, № 3, էջ 206—212:

Դրախոս. Լուսինյան Գ. Նոր բաղդիբ պատկերազարդ իրանաանայ: Հտ. 1. Ա.—Ո. Փարիզ, 1900: Մուրճ, 1901, № 1, էջ 204—213:

Դրախոս. Հովհաննիսյան Մ. Քննական պատմություն ժութի դարու հայ դպրության: Փարիզ, 1901: Մուրճ, 1901, № 10, էջ 187—192:

Դրախոս. Մուրադյան Ե. Քննական պատմություն Արշակ Բ-ի և անոր Պապ որդիություն: Ադեմանդրիա, 1900: Մշակ, 1901, № 108, էջ 1—2:

Դրախոս. Յուզակ հայերեն ձեռագրաց Սանասարյան վարժարանի ի Կարին: Կազմեց՝ Հ. Անադյան: Վիեննա, 1900: Մուրճ, 1901, № 2, էջ 255—260:

Դրախոս. Марр Н. Я. Ипполит. Толкование Песни Песней. Тексты и разыскания по армяно-грузинской филологии. Кн. 3. СПб, 1901. Մշակ, 1901, 25/XI, № 262. էջ 1—2:

Դրախոս. Мсереянц Л. Этюды по армянской диалектологии. Ч. 2, вып. 1. Сравнительная морфология Мушского диалекта в связи с морфологией габара и средне-армянского. М., 1901. Մուրճ, 1901, № 5, էջ 250—256:

Դրախոս. Халатянц, Г. О некоторых географических названиях древней Армении в связи с данными Ванских надписей. М., Изд. Моск. Имп. Археол. об-ва, 1901. Մշակ, 1901, № 120, էջ 2:

1 9 0 2

Արսեն արքեպիսկոպոս Այտնյան: [Մահվան արժիվ]: Ա. Հ., 1902, դիրք 9, էջ 282—284:

Մ. Բրոսսե: [Մենդյան 100-ամյակի արժիվ]: Մշակ, 1902, 7/III, № 50, էջ 1—2:

Երիցյանի գրական գործունեության մասին: [Մահվան արիվ]: Մշակ, 1902, 27/II, № 43, էջ 1, 28/II, № 44, էջ 1—2:

Պրոֆեսոր Օգյուստ Կարրիեր: [Մահվան արիվ]: Մշակ, 1902, 27/I, № 19, էջ 1:

Մախի նահապետները: [Գ. Արծրունու մահվան 10-րդ տարեդարձի արիվ]: Մշակ, 1902, 19/XII, № 280, էջ 2: Ստորագր.՝ Սա. Մ.:

Դրախտ. Արեղյան Մ. Հայ ժողովրդական առասպելները Մ. Խորենացու պատմության մեջ: Վաղարշապատ, 1901: Մշակ, 1902, 12/I, № 6, էջ 1—2:

Դրախտ. Дагбашян И. Полный русско-армянский словарь. Вып. 1, 2. Тифлис, 1902. Մուրճ, 1902, № 9, էջ 190—206:

Դրախտ. Հայկունի Ս. Ժողովրդական վեպ և հեքիաթ: Էմինյան ազգագրական ժողովածու, հտ. Բ: Մոսկվա-Վաղարշապատ, 1901: Մշակ, 1902, 7/IV, № 76, էջ 1:

Դրախտ. Վեբեր Ս. Արարատը Սուրբ գրոց մեջ: Թարգմ. Հ. Բ. Պիլեգիկյան: Վիեննա, Մխիթարյան տպ., 1901: Մուրճ, 1902, № 3, էջ 144—146:

Դրախտ. Տեր-Պողոսյան Գր. Նկատողություններ Փավստոսի պատմության վերաբերյալ: Վիեննա, Մխիթարյան տպ., 1901: Մուրճ, 1902, № 3, էջ 153—157:

Հին դարերից: [Առաջարկ «Պատմագիրք հայոց» մատենաշարի հրատարակման մասին]: Մշակ, 1902, 27/X, № 238, էջ 1—2, 31/X, № 241, էջ 1—2, 1/XI, № 242, էջ 1—2:

Թարգմանության ծաղիկներ: Լուսա, 1902, № 1, էջ 172—182, № 2, էջ 153—162: Ստորագր.՝ Ս. Մ.:

Գր. Տեր-Պողոսյանի նկատողության արիվ: [«Մի նկատողություն Փավստոսի պատմության մասին» հոդվածի կապակցությամբ]: Հ. Ս., 1902, № 6, էջ 190—191:

Նամակ խմբագրության: [Խորեն եպ. Ստեփաննի՝ Խորենացու «Հայոց պատմության» աշխարհաբար քարգմանության և

Բարդուղիմեոս Եպ. Գևորգյանի՝ «Խորենացուն Խորենացվով
պետք է հասկանալ» գրքի շուրջը: Մշակ, 1902, 3/XII, № 267,
էջ 2—3:

1 9 0 3

Ուղագրություններ Ղ. Փարպեցու Պատմության և Թղթի:
ZAPh, Bd. 2, 1903, H. 2, S. 226—233:

Թարգմ. Լուսկիչ Վ. Կյանքը ծովերի խորհում: Թիֆլիս,
ուպ. Մ. Մարտիրոսյանցի, 1903: 96 էջ: (Հրատ. Գ. Գալստյա-
նի):

Դադրաշյանի պատասխանի առթիվ: Մուրճ, 1903, № 1,
էջ 159—175:

Նամակ խմբագրության: [«Պատմագիրք Հայոց»-ի հրա-
տարակության հախանձոնությունը «Հանդես ամսօրյա»-ի կող-
մից «Մշակ»-ին վերագրելու քյուրիմացության պարզաբանում]:
Մշակ, 1903, 6/II, № 27, էջ 2:

Նամակ խմբագրության: [Շնորհակալական ուղերձ Սուփաս
արհեստիսկոպոս Պարգյանին՝ «Պատմագիրք Հայոց»-ի առա-
ջին հատորի հրատարակման համար դրամական օժանդակու-
թյուն ցույց տալու կապակցությամբ]: Մշակ, 1903, 26/IV,
№ 87, էջ 2:

1 9 0 4

Ղազար Փարպեցվո պատմություն Հայոց և Թուրք առ Վա-
հան Մամիկոնյան: Թիֆլիս, Արագածոտիկ Մարտիրոսյանցի,
1904: 16, 213 էջ: [Գ. Տեր-Մկրտչյանի հետ համատեղ]:

Մոռացվածքն ոչ: [«Պատմագիրք Հայոց»-ի հրատարակ-
ման շուրջը]: Մշակ, 1904, 19/XI, № 254, էջ 1—2:

1 9 0 5

Կոմիտասի կոնցերտի առիթով: Մշակ, 1905, 31/III, № 59,
էջ 1:

Նամակ խմբագրության: [«Պատմագիր» Հայոց]—ի հրատարակման շուրջը]: *Հումա*, 1906, № 7—8, էջ 174—175:

Նամակ խմբագրության: [Ռոստոմի՝ «Ինտելիգենտների մի ազգոգուտ ձեռնարկ» հոդվածի առթիվ]: *Երկիր*, 1906, 30/XI, № 51, էջ 4, 1/XII, № 52, էջ 3—4:

Նամակ խմբագրության: [Ռոստոմի՝ «Ինտելիգենտների մի ազգոգուտ ձեռնարկ» հոդվածի առթիվ]: *Մշակ*, 1906, 29/XII, № 235, էջ 3:

Նամակ խմբագրության: [Կովկասագիտական կուրսերում կարդացած դասախոսության շուրջը]: *Մշակ*, 1907, 30/IX, № 119, էջ 4:

Դասընթաց հայոց մատենագրության պատմության՝ Ներսիսյան Հոգևոր դպրոցի աշակերտների համար: 2-րդ՝ բարեփոխված հրատ.: Թիֆլիս, 1908: 286 էջ: [Ապակետիպ]:

Հայցական հոլովը աշխարհաբարի մեջ: Նոր դպրոց, 1908, № 1, էջ 44—51:

Նույնը՝ առանձին հրատ.: Թիֆլիս, տպ. «Կուլտուրա» ընկերության, 1910:

Հ. Հյուրչման: [Մահվան առթիվ]: *Մշակ*, 1908, 25/1, № 19, էջ 2—3:

W [«Վ.»] հնչյունի գրությունը հայերենի մեջ: (Ապրիլի 17-ի Ուսուցչական միության ժողովում կարդացած դասախոսության բովանդակությունը): *Մշակ*, 1908, 30/IV, № 92, էջ 2—3, 1/V, № 93, էջ 2—3:

